ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2018 թ.
№ 12 (1029)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության համատեքստում անց են կացվում մանկավարժական բուհական ծրագրերի բարեփոխումներ: Այդ շրջանակներում սեպտեմբերի 28-ին Կոնգրես հյուրանոցի սրահում անցկացվեց «Ճանապարհ դեպի ներառականություն» խորագրով միջազգային գիտաժողով:

➤2

Արկադի Դվորկովիչը՝ Մանկավարժականում

ՖԻԴԵ-ի նախագահի թեկնածու Արկադի Դվորկովիչը Հայաստան էր այցելել՝ ծանոթանալու հայկական շախմատի նվաճումներին, հանրակրթական ոլորտում շախմատի ներդրման փորձին, կատարված աշխատանքներին և առաջիկա անելիքներին:

Այցի շրջանակում նա հյուրընկալվեց նաև Մանկավարժական համալսարանում:

Բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց հյուրին՝ ընդգծելով, որ բուհի համար կարևոր նշանակություն ունի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտը, որտեղ տարբեր մասնագետներ համատեղ իրականացնում են հետազոտություններ: Ռեկտորն ընդգծեց, որ Հայաստանում շախմատը գերիշխանություն ունի և հույս հայտնեց, որ ոլորտում ձեռքբերումները կլինեն շարունակական:

ՀՊՄՀ շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ, Հայաստանի շախմատի ակադեմիայի նախագահ Սմբատ Լպուտյանը մեծ պատիվ համարեց Արկադի Դվորկովիչի այցը Մանկավարժական համալսարան և ներկայացրեց բուհում գործող «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատակազմին, գործունեությունն ու ուղղությունները:

Ս. Լպուտյանը ներկայացրեց սոցիոլոգների, հոգեբանների, մեթոդիստների, հատուկ մանկավարժների խմբերի գործունեության ուղղությունները, միաժամանակ ընդգծելով, որ ոլորտում անելիքներ շատ կան:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար Վահան Սարգսյանը մանրա-

➤3

Մահացել է աշխարհահռչակ շանսոնյե, բանաստեղծ, դերասան Շառլ ԱԶՆԱՎՈՒՐԸ

«Ես բառարաններ եմ թերթում անվերջ, որ աշխարհին ամեն օր նոր բառերով սիրեմ»:

Շառլ ԱԶՆԱՎՈՒՐ



Իմ ամբողջ կյանքը հաղթանակ է ինքս իմ նկատմամբ

Լինել, մեռնել,
որ իրենց պես նորի՛ց ծնվեն
կեղծիքներն այս անհանգրվան,
մահկանացո՛ւ լինել էլի,
սիրել մինչև պահը մահվան,
գուցե նաև է՛լ ավելի
Գուցե նույնիսկ փորձել զատել
հոգին մարմնից: Եվ անկաշկանդ
սիրել մինչև պահը վերջին
Գուցե նաև ավելի շատ....

թարգմ. Վահրամ Սահակյանի

«Հավանաբար իմ ամբողջ կյանքը հաղթանակ է ինքս իմ նկատմամբ:

Ես զրոյից եմ սկսել, ինձ բախտ է վիճակվել ամեն ինչ ինքնուրույն սովորել՝ երաժշտություն, գրականություն, դերասանի վարպետություն: Այն տարիներին ուսումը վճարովի էր, իսկ մեր ընտանիքի հնարավորությունները համեստ էին, այդ պատճառով ստիպված էի վաղ լքել աշակերտական նստարանը: Այդ պահից ի վեր ստիպված էի ամեն ինչին ինքնուրույն հասնել:

... Ես ներշնչանքին չեմ հավատում, ես քրտինքին եմ հավատում: Որպես վարպետ՝ ես կռում եմ յուրաքանչյուր բառը, հղկում եմ յուրաքանչյուր արտահայտությունը: Եթե անհրաժեշտ արտահայտությունը գտնելու համար հարկավոր է օրեր, շաբաթներ կամ նույնիսկ ամիսներ անցկացնել «ես այն համառորեն փնտրում եմ»:

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

➢1

Հանդիպում ռեկտորի հետ

Մանկավարժական համալսարանը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակը նախաձեռությամբ, Մինեսոտայի համալսարանի հետ 2016 թվականից իրականացնում է համատեղ հետազոտական նախագիծ: Համագործակցության նպատակն էր մեր համալսարանի դասախոսական անձնակազմին փոխանցել համապատասխան միջազգային վարչարարական փորձառություն՝ վերանայելու ապագա ուսուցիչների կրթական ծրագրերը, ինչպես նաև փոխանակել ներառական կրթության ոլորտում իրենց տեսական և գործնական փորձը:

Սեպտեմբերի 24-ին Մինեսոտայի համալսարանի դասախոսական պատվիրակությունը Մանկավարժական համալսարանում էր: Աշխատանքային հանդիպումների ընթացքում համակարգվեցին քննարկման թեմաները, վարպետաց դասերի նյութերը, որն ամփոփվեց երկկողմ հուշագրի ստորագրմամբ:

Մինեսոտայի համալսարանի հետազոտական թիմին ընդունեց նաև բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը և աշխատանքային խմբի անդամներ Ռենատա Թիչային, Բրայեն Էբերիին, Սյուզան Օ՚Կոննորին, Քրիստոֆեր Ջոհնստոնին պարգևատրեց ,Մանկավարժական համալսարանե մեդալով: Ռեկտորը կարևորեց թիմի անդամների աշխատանքը համագործակցության շարունակականության և հետազոտական կլինիկայի համատեղ հիմնադրման գործում:

«Որպես գիտնականներ, ձեզ համար հետաքրքիր կլինի կատարել հետազոտություններ և հաշվի առնել մեր երկրի առանձնահատկությունները, դրանք համեմատել այլ երկրների հետ»,-ասաց Ռուբեն Միրզախանյանն ու հավելեց, որ ակնկալվում է ամերիկացի գործընկերների աջակցությունը հետազոտական կլինիկայի հիմնադրման գործում:

Ամերիկյան կողմի հետազոտական թիմի անդամները շնորհակալություն հայտնեցին ռեկտորին պարգևի, իսկ ՅՈՒՆԻՍԵՖ-ին և Մանկավարժական համալսարանին՝ համատեղ նախագիծն իրականացնելու համար. հայ-ամերիկյան համագործակցային աշխատանքի վերջնարդյունքները գոհացնող են. 15 գլուխներից բաղկացած ներառական կրթության դասագիրք, գործնական հիմնախնդիրներին առնչվող 4 վեբինարների ստեղծում, «Ներառական կրթություն» դասընթացի, մատուցվող նյութի բովանդակության, թեմաների վերանայում և այլն:

Ամերիկյան գործընկերները վստահեցրին, որ հետազոտական կլինիկայի ստեղծումը համընկնում է բուհի հետ հետագա համագործակցության իրենց տեսլականին, իրենք նույնպես շատ բան սովորեցին հայ գործընկերներից: Ըստ ամերիկյան գործընկերների՝ Մանկավարժական համալսարանը ներառական կրթության ոլորտում կարևոր դերակատարություն ունի և կարող է լինել հետազոտական կենտրոն Հայաստանի համար, և միջբուհական համագործակցությունը մասնագետներին մեկտեղելու, հետազոտություններ իրականացնելու և վերջնարդյունքները գործնականում կիրառելու ամենաճիշտ ուղին է:

Վարպետաց դասեր

Պետական պլանով նախատեսված էր 2018 թվականին համատարած անցնել ներառական կրթության, սակայն այն հետաձգվեց, որպեսզի ուսուցիչներն ավելի պատրաստ մտնեն դպրոց, զինվեն նոր մեթոդներով ու նյութերով, որ դասարանում կարողանան աշխատել տարբեր ունակություններով երեխաների հետ:

Սեպտեմբերի 25-ին Երևան քաղաքի ներառական կրթություն իրականացնող 54 դպրոցների ուսուցիչներ Մանկավարժական համալսարանում լսեցին Մինեսոտայի համալսարանից ժամանած պրոֆեսորների և Մանկավարժական համալսարանի դասախոսների՝ ներառական կրթությամբ դասավանդելու համատեղ փորձի մասին: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կրթական ծրագրերի բաժնի ղեկավար, կրթության ոլորտի մասնագետ Ալվարդ Պողոսյանը ներկայացրեց հանդիպման առաքելությունը՝ հավելելով. «Ակնկալում ենք ուսուցիչների ակտիվ մասնակցություն, նրանց կարծիքները և հետադարձ կապը, որը Մինեսոտայի և Մանկավարժական համալսարանների դասախոսներին հնարավորություն կտա հետագա ծրագրերում հաշվի առնել նաև ուսուցիչների կարծիքներն ու տեսակետները»:

Ուսուցիչները դիտեցին Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության բարեփոխումների մասին «Ճանապարհ դեպի ներառականություն» խորագրով ֆիլմ, ապա նրանց ներկայացվեց համագործակցության արդյունքում ստեղծված ներառական կրթության դասագիրքը, վեբինարները և ուսուցողական մոդուլները:

Դասընթացների ընթացքում համատեղ աշխատելու իրենց մեթոդները ներկայացրին 4 պրոֆեսոր Մինեսոտայի և 1՝ Մանկավարժական համալսարանից: Դասընթացները հետաքրքիր էին իրենց ձևաչափի մեջ. ներկայացվեց երկուսով դասը վարելու մեթոդներն ու առանձնահատկությունները, մեթոդի էությունը՝ համատեղ ուսուցման փորձի ցուցադրությամբ:

Միջազգային գիտաժողով

Ներառական կրթության համատեքստում մանկավարժական բուհական ծրագրերի բարեփոխումների շրջանակներում սեպտեմբերի 28-ին Կոնգրես հյուրանոցի սրահում անցկացվեց «Ճանապարհ դեպի ներառականություն» խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովը ներկայացուցչական էր. մասնակցում էին ՀՀ կառավարության պաշտոնյաներ, ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչներ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի տարածաշրջանային և հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների, վերականգնողական կենտրոնների մասնագետներ, ներառական դպրոցների ուսուցիչներ, ԱՄՆ Մինեսոտայի համալսարանի փորձագետներ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսներ և ուսանողներ:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Աֆշան Խանը ողջունեց Հայաստանի ջանքերը համընդհանուր ներառման անցման ուղղությամբ, մատնանշեց դպրոցներ կատարած իր այցելությունների ընթացքում արձանագրված որոշակի խնդիրներ, հատկապես շենքային հարմարեցումներ չունեցող դպրոցներում: Նա կարևորեց Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաներին մանկատներում ներառելու և նրանց նույնպես համընդհանուր կրթական համակարգում ներառելու հանգամանքը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց միջազգային գիտաժողովի մասնակիցներին և ներկայացրեց ՀՊՄՀ-ի և Մինեսոտայի համալսարանի միջև հատուկ կրթության ոլորտում իրականացվող երկամյա ծրագրի արդյունքները: Ռեկտորը կարևորեց հատկապես դասագրքի ստեղծումը, որն առաջինն ներառական կրթության ասպարեզում, և ընդգծեց նաև ստեղծված 4 վեբինարների և արդի պահանջներին համապատասխան, վերանայված առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կարևորությունը. «Վեբինարներն իրենց բովանդակությամբ ունեն խիստ կարևոր նշանակություն ներառական կրթության տարածման համար, իսկ բակալավրիատի և մագիստրատուրայի համար վերանայված ծրագրերը ժամանակակից են և համապատասխանում են արդի բոլոր պահանջներին»:

Ռեկտորը հավելեց, որ համագործակցության հաջողությունը երկու բուհերի աշխատանքային խմբերի մասնակիցների արդյունավետ աշխատանքի հետևանք է:

ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանն իր խոսքում ընդգծեց, որ համընդհանուր ներառումը նախարարության գլխավոր առաջնահերթություններից է և իր պաշտոնավարման ընթացքում բազմաթիվ հանդիպումներ է ունեցել միջազգային և տեղական կառույցների ներկայացուցիչների հետ:

«Սա շատ կարևոր ամփոփում է, երբ առաջին անգամ ներառական կրթության վերապատրաստումների, դասընթացների համար ստեղծվում է ուսումնական ձեռնարկ մասնագետների կողմից, որոնք մեծ փորձ ունեն ոլորտում: ՀՀ-ում արդեն 4 մարզում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության. լիահույս եմ՝ շուտով համընդհանուր ներառման կանցնեն նաև մայրաքաղաքի դպրոցները, որի հետազոտության արդյունքները միայն կհեշտացնեն հետագա աշխատանքները»,-ասաց նախարարը:

«Շատ եմ կարևորում նմանօրինակ հետազոտական աշխատանքները, հատկապես երբ դրանք վերաբերում են երեխաների իրավունքներին, և այս առումով պետք է նկատել, որ խոցելի խմբում են հաշմանդամ երե- ➢3

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ...

➢2 խաները, որովհետև շատ հաճախ մենք չենք կարողանում նրանց համար ապահովել համապատասխան պայմաններ: Ներառականության ոլորտում իրականացվող բարեփոխումները մեզ համար կարևոր են նրանով, որ ամերիկյան փորձագետների հետ համագործակցության արդյունքում ստեղծված ծրագրերն ու դասընթացները օգտակար կլինեն ոչ միայն կրթական հաստատությունների ուսուցիչների, այլև ընդհանրապես մեր խնամքի հաստատությունների բոլոր մասնագետների համար,-ասաց ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության փոխնախարար Սուրեն Մանուկյանը:-Որպես Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գերակա ուղղություն՝ մենք բարեփոխումներ ենք իրականացնում բոլոր խնամքի հաստատություններում և շահագրգիռ ենք, որ այդ բոլոր կենտրոնները լինեն ներառական: Բարեփոխումների գործընթացներում մենք միշտ ունենք գիտելիքի և փորձառության կարիք և սոցիալական աշխատանքում մենք այս մոտեցումների կարիքն ունենք»:

Ներառականության մերօրյա խնդիրների ու դրանց հնարավոր լուծումների մասին խոսեց Հայաստանում ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության առաքելության տնօրեն Դեբորա Գրեյզերը:

Պլենար նիստում զեկուցումով հանդես եկավ ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի ղեկավար, լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, ծրագրի համակարգող Մարիաննա Հարությունյանը, ով անդրադարձավ բուհում Հատուկ կրթության ֆակուլտետի պատմությանը, ՀՊՄՀ և Մինեսոտայի համալսարանների համագործակցությանը, ներառականության ուղղված գաղափարախոսությանը, ամերիկյան համատեղ հաջողված փորձին՝ ներառական կրթության դասագրքի համատեղ մշակման քայլերին և վերջնարդյունքին:

«Ներառական հասարակության հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի գործադրում, գիտահետազոտական աշխատանքների իրականացում, գործնական մեթոդական ձեռնարկների մշակում, ստեղծում, հայալեզու տերմինաբանության մշակում և այլն. սրանք երկու կողմերի համագործակցության քայլերն են, որոնք թույլ կտան ընդլայնել համագործակցության սահմաններն ու արձանագրել նոր ձեռքբերումներ»,-ընդգծեց զեկուցողը:

Գիտաշխատող, ԱՄՆ Մինեսոտայի համալսարանի ներառական կրթության գլոբալ ռեսուրսների կենտրոնի տնօրեն Ռենատա Թիքան հանգամանորեն խոսեց ՀՊՄՀ-ի և Մինեսոտայի համալսարանների համագործակցության շրջանակներում կատարված աշխատանքի շոշափելի արդյունքների մասին՝ ուսուցողական նյութերի մշակում՝ մոդուլներ, վեբինարներ, ֆիլմ, համալսարանական դասընթացների վերանայում ու մշակում: Զեկուցողն անդրադարձավ մանկավարժական բուհական և հետբուհական կրթության և վերապատրաստումների ընթացքում նյութերի օգտագործմանը:

Ամփոփիչ խոսքով ներկայացավ ՅՈՒՆԻՍԵՖ-ի փորձագետ Պաուլա Հանքը:

Հարց ու պատասխանի ձևաչափով ներկաները քննարկեցին ու իրենց մտահոգություններն արտահայտեցին ներառականության խնդիրների շուրջ, ապա դիտեցին ֆիլմ «Ճանապարհ դեպի ներառականություն» վերնագրով:

Մինեսոտայի համալսարանի խմբի անդամները հավելեցին, որ ներառական կրթությունը հատուկ կրթություն չէ, իսկ հանրակրթության պատասխանատուները պետք է աշխատեն ուսուցիչների հետ:

Նրանք շնորհակալություն հայտնեցին համատեղ արդյունավետ աշխատանքի համար և հույս հայտնեցին, որ հետագա համագործակցության շրջանակներում հնարավորություն կստեղծվի ծրագրում ներառել նաև Սկզբնական կրթության ֆակուլտետի դասախոսներին:

Մանկավարժական համալսարանի և Մինեսոտայի համալսարանների համատեղ աշխատանքը Հայաստանում համընդհանուր ներառման անցման ճանապարհին լավագույն քայլ էր՝ ուղղված հատուկ կարիքներ ունեցող երեխաների որակյալ կրթության ապահովմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի նոր ուսումնական տարվա առաջին գիտական խորհրդի նիստը: Օրակարգում երկու կարևոր զեկուցումներ էին, որոնք վերաբերում էին համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման բարեփոխումներին և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման ընթացակարգին: Միաժամանակ ներկաները հաստատեցին համալսարանի 2019-2020 ուստարվա ընդունելության մասնագիտությունների և քննությունների ցանկը, ինչպես նաև համալսարանի գիտական խորհրդի 2018-2019 ուստարվա աշխատանքային ծրագիրը:

Գիտական խորհրդի անդամները լսեցին պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանի զեկուցումը մանկավարժական պրակտիկայի բարեփոխումների ընթացքի մասին: Զեկուցողը ներկայացրեց պրակտիկայի ասպարեզում նորություններն ու ձեռքբերումները՝ խոսելով նաև բացթողումների ու անելիքների մասին: Վ. Սարգսյանը փաստեց, որ Google Classroom–ը շարունակում է մնալ որպես ուսանողների խորհրդատվության, մշտադիտարկման և հետադարձ կապի համակարգ, խոսեց մանկավարժ և հոգեբան խորհրդատուների գործունեության հայեցակարգ ներդնելու անհրաժեշտության մասին: Մագիստրոսական պրակտիկայի բարելավման մասին խոսելիս զեկուցողն ընդգծեց, որ նախատեսվում է պրակտիկայի մեկ շրջափուլը կազմակերպել դպրոցներում, կրթական ու վերականգնողական կենտրոններում, իրականացնել հանձնաժողովային գնահատում և ամփոփում, ապահովել հետազոտական և մանկավարժական բաղադրիչների միաժամանակյա գործարկում: Նա կարևորեց կիսամյակային սեմինարների և բուհում մանկավարժահետազոտական պրակտիկայի ղեկավարների հաշվետվությունների կազմակերպումը:

Ռեկտոր Ռ. Միրզախանյանն ընդգծեց պրակտիկայի ասպարեզում համալսարանի ձեռքբերումները՝ դրանք համարելով Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ արդյունավետ աշխատանքի արդյունք:

Ներկաները ի գիտություն ընդունեցին պրակտիկայի կենտրոնի ղեկավարի հաղորդումը և որոշում ընդունեցին պրակտիկայի բարեփոխումների շարունակականության վերաբերյալ:

ՀՊՄՀ պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը ներկայացրեց շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման նոր ընթացակարգը. այսուհետև ավարտական քննության ձևի ընտրությունը վերապահվում է շրջանավարտներին, ձայնագրությունները պահվում են ոչ թե 1 օր, այլ 6 ամիս: Ամփոփիչ ատեստավորման գնահատականում պրակտիկային կհատկացվի 20%, իսկ կամավորական աշխատանքին՝ 5%, մագիստրոսներին գերազանցության դիպլոմ կտրամադրվի 90 % ՄՈԳ-ի դեպքում (նախկին 95-ի փոխարեն):

Գիտական խորհրդի կողմից ընթացակարգը հաստատվեց:

Լսեցին նաև ընթացիկ հարցերի մասին:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների թեմաները և հրատարակության երաշխավորած գրքերը:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը խորհրդի հաստատմանը ներկայացրեց ֆակուլտետը Հատուկ և ներառական կրթություն վերանվանելու հարցը:

Գիտական խորհուրդը հաստատեց նաև Գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի որոշումը՝ դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնը միավորելով կերպարվեստի ամբիոնի հետ:

Գիտական խորհուրդը որոշում ընդունեց պատմության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լաուրա Ռաշոյանին «Մովսես Խորենացի» անվանական կրթաթոշակ տրամադրելու մասին:

Արկադի Դվորկովիչը՝ Մանկավարժականում

➢1 մասն ներկայացրեց իրականացրած հետազոտությունները. շախմատի դասավանդման ազդեցությունը, դրա արդյունավետությունը, ընդգծելով, որ այդ գործում ամենակարևորը ուսուցիչների վերապատրաստումն է: Նա խոսեց նաև առարկայի պլանավորման, դասավանդման ընթացքում կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտության մասին և հավելեց, որ ինստիտուտը մշտապես վերլուծում է արդյունքները:

ՖԻԴԵ-ի նախագահի թեկնածու Արկադի Դվորկովիչն իր հիացմունքը հայտնեց մեր երկրում շախմատի լայն տարածման, զարգացման վերաբերյալ և վստահեցրեց, որ այդ ոլորտում շատ երկրներ կարող են կիրառել հայաստանյան փորձը:

ՆԱ ՍՏԵՂԾԵՑ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐ ԴՊՐՈՑԸ

Հայ ժողովուրդն այս օրերին նշում է հայ դասական գեղանկարչության անհատականություններից մեկի՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ ակադեմիայի իսկական անդամ Հովհաննես Զարդարյանի ծննդյան 100-ամյակը: Ավելի քան 10 տարի Հ. Զարդարյանը ղեկավարել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնը՝ արվեստագետների մի ամբողջ սերնդի փոխանցելով իր արվեստի նրբությունները: Նրա աշակերտներն այսօր հաջողությամբ ստեղծագործում են, որում մեծ է Ուսուցչի ներդրումը:

Եվ ահա Մանկավարժականում սեպտեմբերի 25-ը նշանավորվեց վերոհիշյալ ֆակուլտետում դասախոսների ստեղծագործական մեկական աշխատանքների ցուցադրմամբ և Հովհաննես Զարդարյանի անվան արվեստանոցի բացումով:

«Անցյալ դարում ասպարեզում էին մեծագույն գեղանկարիչներ, որոնց այսօր իրավամբ անվանում ենք դասականներ: Նրանցից էր Հովհաննես Զարդարյանը. այսօր՝ նրա 100-ամյակի օրերին, մենք հպարտությամբ ենք արձանագրում, որ 60-ականների վերջին այստեղ սկսեց աշխատել և սերունդներին արվեստի դասեր տվեց մեծ նկարիչը»,-ասաց ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Հովհաննես Զարդարյանը ստեղծել է գեղանկարչության իր դպրոցը մեր ազգային գեղարվեստի պատմության մեջ՝ արժանանալով բազմաթիվ պարգևների:

Ռեկտորը կարևորեց ամբիոնի դասախոսների աշխատանքների ցուցահանդեսի բացումը՝ հորդորելով, որ այն ամեն տարի նոր, տարբեր ցուցադրություններով շարունակական բնույթ կրի և դառնա ավանդական: Նա ընդգծեց այն պատասխանատվությունը, որով ուսանողները մտնելու են արվեստանոց և տրվեն ստեղծագործ աշխատանքի:

«Այս համալսարանը գիտե հարգել մեծերին, որոնք մեծ ներդրում են ունեցել բուհում: Պատահական չէր, որ 20-րդ դարը տվեց այդպիսի մեծ անուն, նա ապրեց և ստեղծագործեց մշակութային հետաքրքիր մթնոլորտում, և այսօր մենք հպարտությամբ ասում ենք, որ մենք այդ բարձր արվեստի հետևորդներն ենք»,-ասաց ՀՊՄՀ կերպարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Աղամյանը:

Դասախոսների և ուսանողների հյուրն էր նկարչի դուստրը՝ Անահիտ Զարդարյանը, ով հոր հետ կապված հետաքրքիր հուշեր պատմեց: Երբ Հ. Զարդարյանին հրավիրել են Մանկավարժական՝ նա երկմտել է, որովհետև իր բուռն ստեղծագործական տարիներն էին, բայց շուտով հասկացել է, որ դա շնորհակալ գործ է: Նա բուհ է հրավիրել լավագույն նկարիչներին՝ ստեղծելով մշակութային հետաքրքիր մթնոլորտ:

Հ. Զարդարյանը կրկնեց այն, ինչ ասել էր Սեդրակ Առաքելյանը,-ասաց Անահիտ Զարդարյանը, որովհետև մի անգամ Ս. Առաքելյանը մեծ վրձնով կանաչ գույնի վրձնահարվածներով փակել էր Հ. Զարդարյանի նկարի ստվերը, ինչը վերջինիս շատ էր զարմացրել: Բայց շուտով նա հասկացել էր, որ հայկական նկարչությունը գույնի նկարչություն է, ոչ թե ստվերի:

Մի անգամ, երբ այցելել էի Լևոն Կոջոյանի արվեստանոց, նա ցույց տվեց մի մեծ վրձին և պատմեց, որ մի անգամ խանութում մտածում էր ինչ վրձին գնել, պատահաբար ներս է մտել Լևոն Կոջոյանը և հորդորել վերցնել ամենամեծ վրձինը:

«Հայրս իրավամբ հայ գեղանկարչության մեծ վրձին ուներ»՝ իր ելույթն ամփոփեց նկարչի դուստրը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Թեքեյան մշակութային միությունում տեղի ունեցավ գրող, գրականագետ Երվանդ Ազատյանի «Ժամանակի և ժամանակակիցներու հետ» գրքի շնորհանդեսը: Հանդիսությունը վարում էր «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը, ով ներկայացրեց Ե. Ազատյանին՝ որպես մարդու, ով հրաշալի գիտի հայկական Սփյուռքի խնդիրները: «Երվանդ Ազատյանը հարուստ կենսագրություն ունի, որի ընթացքում երբեք դիտորդ չէ, այլ մասնակից ու պայքարող»,- ասում է Հ. Ավետիքյանը՝ ներկայացնելով նրա կյանքի հարուստ ճանապարհը:

Ե. Ազատյանը ծնվել է Լիբանանում, ուսանել ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան վարժարանում, Բեյրութի ամերիկյան, Բոստոնի և Դիտրոյթի համալսարաններում: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է, ԵՊՀ և Մանկավարժական համալսարանի պատվավոր դոկտոր: Բազմաթիվ գրքերի հեղինակ է, Բեյրութում, Կահիրեում և Բոստոնում զբաղվել է խմբագրական աշխատանքով, վարել է Ալեք Մանուկյանի գրասենյակի աշխատանքները, Սփյուռքում ամենուր բացված հայկական ամբիոնների ճարտարագետն է:

Գիրքը կազմել և խմբագրել է Երվանդ Տեր-Խաչատրյանը, ով նաև «Երուանդ Ազատեան. ժամանակի միջով ընթացողը» խորագրով առաջաբանի հեղինակն է:

ՀՊՄՀ ռեկտոր, Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը Երվանդ Ազատյանին ներկայացնում է որպես Սփյուռքի խոշորագույն մտավորականներից մեկը, բացառիկ իմացությունների տեր մարդ, Սփյուռքի գիտակ, ում գիրքը մեծագույն նվեր է հայ հասարակությանը: Այն մեծ խորհուրդ ունի, որ լույս է տեսել Հայաստանում: Ապրելով ԱՄՆ-ում՝ հեղինակը պարբերաբար այցելում է Հայաստան, որի հետ է հոգով ու մտքով:

Գրքի շնորհանդեսին ներկա էին գրական-մշակութային գործիչներ, որոնք իրենց ելույթներում ներկայացրին գրքի միտումները և արժևորեցին այն:

Հայաստանի գրողների միության փոխնախագահ Պետրոս Դեմիրճյանն ընդգծեց. «Այստեղ մեկ դարի ժամանակ կա և նրա ժամանակակիցների գրական-մշակութային պատկերն է»: Նա անդրադարձավ գրքի հիմնական խնդիրներին՝ անցյալի հանիրավի մոռացված դեմքերի վերարժևորում, ստեղծագործական մթնոլորտի մասին դիտարկումներ, լեզվի խնդրի բարձրաձայնում (սփյուռքի լեզվի կորցնելու մտահոգություն), և ամփոփեց՝ այսպիսի ժողովածուները անչափ կարևոր են մարդկության պատմության համար:

Ելույթ ունեցան գրաքննադատ Ալեքսանդր Թոփչյանը և գրքի կազմող, խմբագիր Երվանդ Տեր-Խաչատուրյանը: Ա. Թոփչյանը Ե. Ազատյանին բնորոշեց որպես փայլուն գրականագետ և գրաքննադատ, իսկ Երվանդ Տեր-Խաչատուրյանը խոսեց հեղինակի լայն հայացքի մասին՝ ասելով. «Այդ ցածրահասակ մարդը երևույթները ինչ բարձրից է տեսնում և որքան լայն է Սփյուռքի գրականության հանդեպ նրա ունեցած հայացքը»:

Գրքից հատվածներ ներկայացրին Կամո Տեր-Պետրոսյանը և Քնարիկ Աբրահամյանը:

Վերջում ելույթ ունեցավ հեղինակը: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր ջերմ ելույթների համար և ասաց. «Վերջին 20 տարում ես զբաղվել եմ լրագրությամբ, գրականությունն ինձ համար կուտակումների ամբողջացում է, լիցքավորում: Արևմտահայ լեզուն ինձ լիցքեր է տալիս: Արևմտահայ լեզուն հոգեվարքի մեջ է, և ես նրա վերջին զինվորներից եմ: Ո՞վ պիտի տեր կանգնի արևմտահայ հարուստ ժառանգությանը: Այս գիրքը իմ երեկվա և այսօրվա խոսքն է, վաղվա գրականության խոսքն է պետք, որ Հայաստանի հեղափոխության նման սիրո և համերաշխության գրականություն պիտի լինի»:

Հայաստանյան ընթերցողի համար հատկապես հրաշալի նվեր է գրական-հասարակական գործիչ Երվանդ Ազատյանի ներկա գիրքը՝ իբրև Սփյուռքի գրականության և ժամանակի իրողությունների փայլուն անդրադարձն, ուր ներկայացված «Դիմանկարներ», «Ժամանակի ընդմէջեն» և «Սեվեռումներ» բաժինները յուրահատուկ հանդիպումներ են ժամանակի և ժամանակակիցների հետ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ծանոթացան ռուսաց լեզվի առանձնահատկություններին

Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետում դասախոսությամբ հանդես եկավ Սանկտ Պետերբուրգի Ա. Գերցենի անվան ռուսաստանյան պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Վալերի Անատոլևիչ Եֆրեմովը: Նա անդրադարձավ մի շարք հարցերի, այդ թվում՝ համացանցում ռուսաց լեզվի կիրառմանը, նրա առանձնահատկություններին, 2017 թվականին համացանցում ամենատարածված բառերին, դրանց տարածման ձևերին, անգլերենից, այլ լեզուներից փոխառություններին և այլն:

Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Նաիրա Դալյանը կարևորում է նման հանդիպում-դասախոսությունները. «Սա լավագույն հնավարությունն է ուսանողների համար՝ ռուսաց լեզվի անմիջական կրողներից տեղեկանալ տվյալ լեզվի նրբություններին և առանձնահատկություններին, առավել խորությամբ տիրապետել լեզվի նրբություններին»:

Պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը դասախոսների և ուսանողների անունից շնորհակալություն հայտնեց հետաքրքիր դասախոսության համար և հույս հայտնեց, որ հետագա համագործակցությունը կնպաստի Հայաստանում ռուսաց լեզվի զարգացմանն ու կամրապնդի երկու երկրների դարավոր կապը:

ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ ԱՊԱԳԱ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 20-ին ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի հյուրը Վան-Վասպուրականի բանահյուսական երգերի լավագույն կատարող երգչուհի, դերասանուհի Լիդա Զաքարյանն էր, ով անհետացումից փրկել է եզակի բանահյուսական նմուշներ:

Հայաստանում Սերբիայի պատվո հյուպատոս, բանաստեղծ, թարգմանիչ Բաբկեն Սիմոնյանը հարցերի միջոցով ուսանողական լսարանի համար բացահայտեց երգչուհի-դերասան Լիդա Զաքարյանի հոգևոր հարուստ ներաշխարհը, որի հետ շփվելու երջանիկ պահեր ունեցան ապագա բանասերները:

Լ. Զաքարյանը դասախոսներին և ուսանողներին ներկայացրեց Վան-Վասպուրականի, Մուշ-Տարոնի բանահյուսական արվեստի հետաքրքիր նմուշներ: Նա մեծ արվեստով ներկայացրեց «Ճղորի տակ», «Հարսի պատմությունը», նորածինների մայրերին նվիրված կատակերգ, «Գովք գեղեցիկ աղջիկներին» և այլ բանահյուսական հրաշալի պատառիկներ՝ դրանք համեմելով երգերով:

Լ. Զաքարյանի հաղթարշավը սկսել է ռադիոյից. նա խոստովանում է, որ հայկական էպոսի ձայնագրությունն իրեն անասելի հաճույք է պատճառել, որ ռադիոյում ունի երգերի և բանահյուսական արվեստի կատարումների մեծ ֆոնդ, բայց իր կոչումը համարում է դերասանությունը: Նա հանդես է եկել մի շարք հեռուստառադիոբեմադրություններում, իսկ Գերմանիայում նկարահանվել է մի մեծ ֆիլմում, ուր իրեն վստահված կերպարին մեծ պատասխանատվությամբ է վերաբերվել:

«Մարդու կյանքում այնքան զարմանալի բաներ են լինում, պատահականություններն էլ շատ են, որոնք կարող է մարդուն բարձրացնել կամ ցած նետել: Անկախ ամեն ինչից՝ ես առաքելություն ունեմ պահպանել իմ մեջ եղած ազգային արժեքները և սերունդներին փոխանցել: Ես հպարտ եմ, որ այդ արժեքների կրողն ու փոխանցողն եմ: Աստծո առաջ սա իմ պարտքն է»,-ասաց դերասանուհին:

Լ. Զաքարյանին բախտ է վիճակվել աշխատել հայ արվեստի մեծերի հետ, սովորել նրանցից ու հիանալ նրանց ստեղծած կերպարներով, որոնցով հարուստ են իր հիշողությունները: Նա ուսանողներին հորդորեց՝ դուք էլ ձեր հիշողությունները հարստացրեք հետաքրքիր մարդկանց հետ հանդիպումներով, նրանցից ինչ-որ բան սովորելով, հարգելով մեր ազգային արժեքները:

Ուսանողները հարցեր ուղղեցին հյուրին մերօրյա հայ թատերարվեստի մասին, Լ. Զաքարյանն էլ ափսոսանքով նկատեց, որ ազգային ներկայացումների փոխարեն այսօր հայ թատրոնը հայացքն ուղղել է դեպի Եվրոպա:

«Ազգի մշտարթուն երակը տաք պահող մարդիկ փոքրաթիվ ժողովուրդներն են, ովքեր վախենում են անհետացումից: Խուսափելու համար պետք է արթուն պահել այդ երակը»,- ասաց Բաբկեն Սիմոնյանը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ալլիտա Դոլուխանյանը մեծ հիացմունքով խոսեց հանդիպման մասին և ընդգծեց, որ այն սպասված էր իր համար և շատ ուսանելի՝ ապագա բանասերների համար: Պրոֆեսորը փաստեց, որ Լիդա Զաքարյանը միջազգային ճանաչում ունենալով հանդերձ, նախ և առաջ ազգային երևույթ է:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանում սեպտեմբերի 25-ին անցկացվեց միջոցառում, որը նվիրված էր ՀՊՄՀ դասախոս, Հայաստանում մանկավարժական առաջին թանգարանի հիմնադիր, քաղսովետի պատգամավոր Անտոն Անտոնյանին: Այդ օրը թանգարանի հյուրն էր մանկավարժական առաջին թանգարանի հիմնադրի թոռը՝ Արամ Գրիգորյանը, ով մի առանձին գորովանքով ներկայացրեց դասախոս, հասարակական ակտիվ գործիչ, ստալինյան բռնապետության զոհ դարձած պապի պատմությունը:

Անտոն Անտոնյանի մասին պատմող նյութերը և լուսանկարները տեղ գտան Մանկավարժական համալսարանի թանգարանում: Թանգարանային հանդիպումը միջոցառմանը ներկա Հատուկ կրթության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների համար հետաքրքիր դաս էր անցյալի պատմության լավ ու վատ իրադարձությունների մասին:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

XIX դ. Հայաստանում և հայկական գաղթօջախներում, հայ հասարակության մեջ ու հայկական մամուլում հրապարակ է գալիս ազգային պատմամշակութային արժեքները հավաքելու, պահպանելու և ուսումնասիրելու հիմնահարցը, ազգային թանգարաններ հիմնելու խնդիրը: Մանկավարժական թանգարանի հիմնադրումը խիստ անհրաժեշտ էր. այն մեծապես կնպաստեր ուսանողության, ինչպես նաև դպրոցականների գործնական աշխատանքների կատարելագործմանը, որակյալ մասնագետների պատրաստմանը:

Անտոն Անտոնյանը ծնվել է 1884 թվականին Երևանում: Կրթություն է ստացել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և մի քանի տարի դասավանդել գյուղի դպրոցում: Այնուհետև ընդունվել է Սանկտ Պետերբուրգի Հողագնյարդաբանական ինստիտուտի Կենսաբանության ֆակուլտետ: Համալսարանն ավարտելուց հետո Անտոն Անտոնյանը նշանակվում է Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող Կարսի փոխհյուպատոս: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին և ստացել սպայի կոչում: Պատերազմից վերադառնալով՝ դպրոցական կրթությունն ամրապնդելու նպատակով Ա. Անտոնյանը ծրագրում է ստեղծել մանկավարժական թանգարան, ուր կենտրոնացած կլինեին քաղաքում պահպանված լաբորատոր իրեր, որոնք կապված կլինեին ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և շատ այլ առարկաների հետ: Կառավարությունն ընդունում է Անտոն Անտոնյանի առաջարկը, և 1921թ.-ի դեկտեմբերի 18-ին պաշտոնապես բացվում է թանգարանը: Այդ նախագծի համաձայն Հայաստանի մանկավարժական թանգարանի առջև հրատապ խնդիր էր դրվում դպրոցների աշխատողներին հնարավորություն տալ հավաքված և ստեղծված ցուցանմուշներով հարստացնել իրենց գիտելիքները հատկապես բնական գիտությունների ասպարեզում: Միաժամանակ մանկավարժական թանգարանը քաղաքների և գյուղերի դպրոցներին պետք է օժանդակեր իր ստեղծած ցուցանմուշներով: Այն պետք է դառնար կենտրոնական ցուցադրական մի կազմակերպություն, որից պետք է օրինակ վերցնեին և նմանատիպ թանգարաններ հիմնեին նաև հանրապետության այլ քաղաքներում ու բնակավայրերում: Սովորողներին պետք է հնարավորություն տրվեր մշտապես այցելել թանգարան, լսել էքսկուրսավարի բացատրությունները: Անտոն Անտոնյանն առաջարկում էր թանգարանային նյութի հավաքման և ցուցադրման ժամանակ չսահմանափակվել Հայաստանի տարածքով: Նա կարծում էր, որ սովորողներին ավելի հիմնավոր գիտելիքներ տալու և ճանաչողության սահմաններն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է ցուցանմուշների փոխանակություններ կատարել ոչ միայն մեր երկրի, այլև արտասահմանյան երկրների նմանատիպ թանգարանների հետ: Հայաստանի մանկավարժական թանգարանի համար նախատեսվում էր ունենալ կենդանաբանական, բուսաբանական, մարդաբանական, երկրաբանական, աշխարհագրական, արդյունաբերական, գյուղատնտեսական, մաթեմատիկական, ֆիզիկայի և քիմիայի բաժիններ: Ճիշտ է, մանկավարժական թանգարանը բացվեց, սակայն բացակայում էր հիմնականը, չկային ցուցադրման համար պիտանի առարկաներ: Նախկին դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում եղած աղքատիկ ցուցանմուշները ցաքուցրիվ էին եղել, անհրաժեշտ էր դրանք ի մի բերել, դրանց հիման վրա ցուցադրություն կազմակերպել: Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդող տարիներին Հայաստանի դպրոցական ողջ համակարգը փլուզվել էր, ուսումնական կյանքը երկրում գրեթե դադարել էր, եղած առանձին դպրոցական շենքերը վերածվել էին զորանոցների և հոսպիտալների, դպրոցներում եղած լաբորատոր իրերը անխնամ թափվել, կուտակվել էին նկուղներում:

Իր աշխատանքային գործունեության առաջին ամիսներին թանգարանը համալսարանի գիտնականների օգնությամբ հավաքեց և գիտական նկարագրության ենթարկեց հանքաբանական ու բուսաբանական ժողովածուներ, նախապատրաստեց դրանց ցուցադրությունը: Թանգարանում բացված կաբինետը, լաբորատորիաները: Կարճ ժամանակամիջոցում մանկավարժական թանգարանը դարձավ Երևանի և հարևան շրջանների մանկավարժների հավաքի, մանկավարժական

հարցերի քննարկման վայր:

Իր մեկամյա գործունեության ընթացքում՝ 1921-1922 ուսումնական տարում թանգարան այցելեց 8.612 մարդ:

1938 թվականին գագաթնակետին էին հասել ստալինյան բռնաճնշումները, որոնց զոհը դարձավ նաև Անտոն Անտոնյանը: Սա մի շրջան էր, երբ Հայկական ԽՍՀ-ում տեղի ունեցած քաղաքական զանգվածային բռնաճնշումներն ընդգրկել էին Հայաստանի ողջ բնակչությունը, այդ թվում՝ հանրապետության ղեկավարներին, հոգևորականությանը, մտավորականությանը և ունևոր գյուղացիներին: Բռնաճնշումներն իրականացվում էին հակահեղափոխական գործունեության, լրտեսության, հակախորհրդային քարոզչության կասկածանքով:

Միայն տարիներ անց՝ 1996 թվականին, Անտոն Անտոնյանի թոռը կարողացավ հասնել արդարության վերականգնմանը և վերցնել պապի արդարացման վկայագիրը, ըստ որի նրան 1938 թվականին գնդակահարել են՝ անհիմն և անօրինակ մեղադրանք առաջադրելով:

Լիլիթ ՍԵՓՅԱՆ
թանգարանի
գիտաշխատող

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցի և Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որով նախատեսում է երկու դպրոցների միջև ուսումնամեթոդական նյութերի, աշակերտների և ուսուցիչների փոխանակում, մեթոդական աջակցություն, ուսուցիչների վերապատրաստում:

Հուշագրի շրջանակներում կիրականացվի սոցիալական, մշակութային և մարդասիրական համա-

գործակցություն, կիրականացվեն համատեղ ծրագրեր:

Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը և Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանը կարևորեցին երկու դպրոցների միջև սկիզբ առնող համագործակցությունը: Տնօրենները լիահույս են, որ համագործակցային աշխատանքը կլինի փոխշահավետ և արդյունքներ կգրանցի կրթության որակի և ուսումնական գործընթացների բարելավման գործում:

Սեպտեմբերի 21-ին Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրենը համալսարանի դպրոցում մասնակցեց Հայաստանի անկախության 21-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը՝ 8-9-րդ դասարանների աշակերտների ավանդական հանդիսավոր տողանին: Փոխգնդապետ Ռուբեն Հովսեփյանի գլխավորությամբ ամեն տարի Նախնական զինվորական պատրաստականության դասը այդ օրը նվիրվում է Անկախության տոնին: Շ. Փահլևանյանը դպրոցականներին հորդորեց լավ սովորել և դառնալ Հայաստանի լավագույն քաղաքացիներ:

Ընտրվեց ուսանողական խորհրդի նոր նախագահ

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ ուսանողական խորհրդի արտահերթ նիստ, որի օրակարգում ՈՒԽ նախագահի, ուսանողական խորհրդի կազմի ընտրություններն էին և ընթացիկ հարցեր:

Վեց տարի համալսարանի ուսանողական խորհուրդը ղեկավարած Ներսիկ Մարգարյանը ներկայացրեց ուսանողական խորհրդի գործունեությունն իր ղեկավարման տարիներին՝ շեշտադրելով, որ այդ տարիներին ՈՒԽ-ն ամեն ինչ արել է ուսանողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար:

«Բուհում և նրանից դուրս ուսանողների ձայնը միշտ լսելի ենք դարձրել. պետական համակարգում քննարկել ու վերհանել ենք ուսանողությանն առնչվող բազմաթիվ հարցեր: Իհարկե, ունեցել ենք նաև որոշակի թերություններ, որոնց մի մասը մեզ հաջողվել է շտկել: Ուսանողական խորհրդի իմ ղեկավարման տարիները ես և ՈՒԽ անդամները պատասխանատվությամբ և արժանապատվորեն ծառայեցրել ենք ուսանողների շահերին: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր ուսանողներին համատեղ արդունավետ աշխատանքի համար»,- ասաց Ներսիկ Մարգարյանը: Նա հավելեց, որ համալսարանում ուսանողների դերն ու նշանակությունն մշտապես բարձր է եղել, իսկ բուհի ղեկավարությունն իրականացրել է ուսանողակենտրոն քաղաքականություն:

Արդյունավետ աշխատանքի և երկարատև գործունեության համար Ն. Մարգարյանը պատվոգրեր հանձնեց ՈՒԽ նախագահի օգնական Աշոտ Խաչատրյանին, փոխնախագահներ Հովհաննես Գուսիկյանին, Սուրեն Եղիազարյանին և Էդիկ Գուլյանին: Այնուհետև խորհրդի ներկա անդամները միաձայն առաջադրեցին ՈՒԽ կազմակերպչական հանձնաժողովի նախագահ, ՀՊՄՀի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի լանդշաֆտային պլանավորման և դիզայնի բաժնի 1-ին կուրսի մագիստրոս, անկուսակցական Պարույր Գալստյանին: Վերջինս էլ բաց քվեարկության արդյունքում ստանձնեց ՈՒԽ նախագահի պաշտոնը:

ՈՒԽ նորանշանակ նախագահ Պարույր Գալստյանը շնորհակալություն հայտնեց ուսանողներին իրեն վստահելու համար և խոստացավ շարունակել ուսանողական խորհրդից և ավագ ընկերներից ստացած ժառանգությունը, շարունակել բուհի ուսանողական խորհրդի լավագույն ձեռքբերումները, դրանք բազմապատկել նոր, հետաքրքիր ձեռնարկներով՝ շեշտը դնելով սոցիալական բնույթի, ռազմահայրենասիրական, մարզական, մշակութային, միջազգային, ուսանողների համակողմանի զարգացմանը նպաստող միջոցառումների վրա:

ՈՒԽ նորանշանակ նախագահը շնորհակալություն հայտնեց նաև Ն. Մարգարյանին՝ իր ղեկավարման տարիներին ուսանողական խորհրդի աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Խորհրդի անդամները քվեարկությամբ Կուլտուրայի ֆակուլտետի մագիստրոս Երվանդ Իսմայիլյանին ընտրեցին ՈՒԽ փոխնախագահ, իսկ Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանող Մառլենա Սարդարյանին՝ խորհրդի քարտուղար:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ԹՈՂԵՑԻՆՔ ՄԵՐ ՓՈՔՐԻԿ, ԲԱՅՑ ԼՈՒՍԱՎՈՐ ԱՎԱՆԴԸ

2018-2019 ուսումնական տարին Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մի խումբ ուսումնառուներիս համար նշանավորվեց «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարան կազմակերպված այցով, որի գլխավոր նպատակն էր միջմշակութային երկխոսությունը: Ծրագիրը բավականին հետաքրքիր և հագեցած էր: Մասնակցեցինք տարաբնույթ գործնական պարապմունքների և դասախոսությունների՝ նվիրված էթնոհոգեբանական և միջմշակութային խնդիրների վերծանմանն ու քննարկմանը, ունկնդրեցինք «Մանկության պատմամշակութային հոգեբանությունը» խորագրով դասախոսությունը համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային ամբիոնում:

Առանձնակի հետաքրքիր էին միևնույն երևույթի նկատմամբ խմբի ազգային տարբեր պատկանելություն ունեցող անդամների մեկնաբանությունները: Մեզ հնարավորություն ընձեռվեց այցելելու համալսարանի յուրօրինակ գիտական կենտրոններ. նեյրոկոգնիտիվ հետազոտությունների ուսումնակրթական ՄԷԳ (մագնիտոէնցեֆալոգրաֆիա) կենտրոն և հետազոտական հոգեբանության ինստիտուտ, Ռուսաստանի կրթության ակադեմիայի (ՀԸԿ) հոգեբանական գիտական ինստիտուտ: Առիթ ունեցանք այցելելու Ռուսաստանի Կալուգայի մարզում գտնվող ամենամեծ էթնոգրաֆիկ այգին՝ էթնոաշխարհը, որտեղ հաճելիորեն ներկայացված էին աշխարհի տարբեր ժողովուրդների ազգային և մշակութային ոգով կերտված ավանդույթները, արժեքները: Այցելեցինք նաև հրեաների թանգարան և Մոսկվայի հանդուրժողականության կենտրոն (центр толерантности), շրջեցինք Մոսկվայի դիտարժան վայրերով՝ հաղորդակից դառնալով ռուս ժողովրդի պատմա-մշակութային և կրթական իրականությանը, ինչպես նաև եղանք «Чистая линия» պաղպաղակի գործարանում, ուր իրականացան մեր մանկության ամենաքաղցրահամ երազները…

Յուրաքանչյուրս այդ հիշարժան ուղևորությունից մեզ հետ մի անմոռանալի մասնիկ բերեցինք, սակայն բոլորիս միավորում էր ևս մեկ կարևոր առաքելություն. ի նշան բարեկամության և համագործակցության՝ Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի ռեկտոր Վ.Վ. Ռուբցովի կողմից իրենց համալսարանի 20-ամյակին նվիրված հոբելյանական գրքի փոխանցումը մեր 95-ամյա համալսարանի հարգելի ռեկտոր պարոն Ռ.Կ.Միրզախանյանին:

Մեր այցելության վերջին օրը Մոսկվայի համալսարանում բոլորս գրավոր բարեմաղթանքներ հղեցինք ամառային դպրոցի հետագա մասնակիցներին՝ հուսալով, որ դրանք ամփոփող պահատուփում թողեցինք մեր փոքրիկ, բայց լուսավոր ավանդը…

Միջմշակութային հաղորդակցության շնորհիվ ձեռք բերած նոր գիտելիքների ու բազում հաճելի պահերի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մանկավարժական համալսարանի և մեր ֆակուլտետի ղեկավարությանը, ինչու չէ, նաև նրա համար, որ մեզ վստահեցին հարևան երկրում ներկայացնելու մեր երկրի մշակույթն ու հարազատ կրթօջախը:

Սուսաննա ՄԻՆԱՍՅԱՆ
Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

Այցելություն Ավերյաց Երկիր

(Սկիզբը նախորդ համարում)

Ճանապարհների ուղղությամբ չկար մի դաշտ, բլուր կամ փոքր հողակտոր, որ անմշակ լիներ: Հասկանալի էր, որ հողագործությունը տնտեսության զարգացած ճյուղերից էր: Ճանապարհի ողջ տարածքով ձգվում էին հացահատիկային տարբեր կուլտուրաներով մշակված հողատարածքներ, բանջարաբոստանային կուլտուրաների առատ դաշտեր և ամենատարբեր պտղատու այգիներ: Ի դեպ՝ հսկայական կիլոմետրերով ձգվող պղատու այգիների պլանտացիաները բնական աղետներից պաշտպանված էին մետաղական ցանցերով և ապահովված էին ոռոգման համակարգով: Հողերի բերրիության հետևանքով երկիրը տարին երեք անգամ բերք է հավաքում, համարյա ոչինչ չի ներմուծում բացի կովի մսից: Սարերի, լեռների լանջերին կառուցված ջրամբարները նախատեսված էին ձյան հալոցքից առաջացած ջրային ռեսուսուրների ամբարման համար: Լեռներից հնարավոր քարաթափման վայրերում կառուցված էին պատնեշներ, որոնք ապահովում էին լիարժեք և անվտանգ երթևեկությունը:



Կենտրոնական Անատոլիայում 100 տարի առաջ այս տեղանքը մեծամասամբ բնակեցված էր հայերով, որոնք ուզում էին ազատ մարդ լինել, տերը իրենց քրտինքի, ապրել պատվով և ազգային արժեքներով: Այսօր արդեն այս տարածքները թուրքական պետությունը վերաբնակեցրել է քրդերով, թուրքերով և այլ ազգային պատկանելություն ունեցող խառնաշփոթով: Ընդհանրապես Թուրքական պետությունում բնակվող ցանկացած այլազգի համարվում է թուրք, և նրանք 80 միլիոն են:

Մոտենում ենք Կարսի նահանգին: Առաջին վայրը, որտեղ կանգնեց մեքենան՝ Եղիշե Չարենցի ենթադրյալ տունն էր:



Պտտվում էինք հազիվ կանգուն պատերի, ավերակների շուրջ և կարդում՝ վաճառվում է: Մտքներիս մեջ և շրթներիս չարենցյան տողերն էին...

Մեզ բացատրեցին, որ տունը կվաճառվի միայն թուրքական քաղաքացիություն ունեցողի: Մոտենում ենք Կարսի բերդին: Ասել թե հոյակապ էր բերդը, նշանակում է ոչինչ չասել: Բերդն իր վեհությամբ, անառիկությամբ, սև քարե պարսպով առանձնակի շքեղություն ու իմաստ էր տալիս քաղաքին. այն կարծես վերևից հսկում էր քաղաքի անցուդարձը՝ իր մեջ պահելով անցած-գնացած վաղեմի հիշողությունները: Բերդից երևում էր Սուրբ Առաքելոց չքնաղ վանքը, որը վերածված էր մզկիթի: Մոտեցանք: Նկատելով որ այլադավան ենք՝ հսկիչը թույլ չտվեց ներս մտնել: Ավելի ուշ թույլատրեց մտնել վանք, բայց զգուշացրեց, որ նկարելն արգելվում է և անհրաժեշտ է հանել կոշիկները: Օտարացված, ցավալի զգացումներ ունեինք... Կարսում զգացինք Գյումրու շունչը, տեսանք գերազանց պահպանված սև շենքեր, որոնց հայկական ճարտարապետական լուծումները ապահովում էին հայկականության ներկայությունը...

Սարիղամիշ տանող ճանապարհն անցնում էր մայրիների անտառների միջով և Արաքս գետի ափով: Արաքսի ողջ երկարությունը 1072 կմ է, որից 200 կիլոմետրն է հոսում Հայաստանով, մնացած մասը հոսում է Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի տարածքով: Արաքսը պղտոր գետ է: Դեպի Բասեն, Տուրուբերան քաղաքների ուղղությամբ ճանապարհի տեղատարափ անձրևը տխուր մտքերից սթափեցրեց մեզ: Ուժեղ անձրևը ինչպես անսպասելի սկսվել էր, այնպես էլ անսպասելի կտրվեց, և ճանապարհը ողողվեց արևի շողերով ու արտակարգ թարմ օդով:

Խնուսի տարածքում ենք, տեսնում ենք Բասեն գետը, որը միանում է Մուրադ գետին: 8-րդ դարի Բասենի կամուրջը կոչվում է նաև Հովվի կամուրջ: Ներկաներից մեկը հեծկլտալով պատմում էր, որ իր տատիկը 100 տարի առաջ անցել է այս կամրջով, ասում էր՝ շատերն էին նետվում կամրջից՝ չցանկանալով ընկնել թուրք ոճրագործների ձեռքը...

(Շարունակելի)

Գայանե ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ-100



Սիրիահայ Մանիա Քեշիշյանը ապրում է Կանադայում և աշխատում է Կանադահայոց թեմի առաջնորդարանում: Նա ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մշակութաբանության բաժնի հեռակա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի է: Թերթի համարներում հատվածաբար կներկայացնենք մեր սփյուռքահայ ուսանողուհու պատրաստած հոդվածը՝ հուշեր Սարդարապատի հերոսամարտի մասնակից հիսնապետ Կավրոշի մասին:

Միայն զէնքով կայ Հայոց փրկութիւն

Կավրոշը՝ Խաչիկ Սարգիս Գազանճեանը, ծնած է Երզնկա 1890թ. մահացած Դամասկոս 1973թ., իսկ Դամասկոսի մէջ ո՞վ չէ լսած Կավրոշի մասին: Սուրիայի մայրաքաղաք Դամասկոսի մէջ դարեր շարունակ տեղ գտած Սուրբ Սարգիս եկեղեցւոյ հարեւանութեամբ, միշտ դուռը բաց, անցնող դարձողին սիրտը բացող ու համայն դամասկահայութեան ծանօթ Անդրանիկ Գազանճեանը, հպարտութեամբ իր հերոս հօր՝ Կավրոշի յուշերով ոգեւորուած կը պատմէ:

«Եթէ ապրիլ կ՚ուզես, դուն քեզ ազատ զգայ, մի վախնար, զարկ՝ Արարատն է հայոց ուժը, զարկ՝ միայն զէնքով կայ Հայոց փրկութիւն, հայրս մեզ այսպէս կը դաստիարակէր» կ՚ըսէ Պարոն Անդրանիկը՝ պատմելով 20-րդ դարի սկիզբի մասին:

Երզնկայի շուկային մէջ նշանաւոր վարպետ պղնձագործ-ձուլագործ Սարգիսն ու իր ընկերները, որոնց միաւորուած էր ՀՅԴ գաղափարախօսութեան սկզբունքները, գիտակցելով իրավիճակի լրջութիւնը, գաղտնիօրէն Սարգիսի տան մէջ սկսան ռազմամթերք պատրաստել, փամփուշտներ, հրացաններու նորոգում եւ այլն:

Այս ճանապարհի վրայ ալ՝ Ծաղկզարդի օրոք, անոնք որոշեցին այս անգամ ռումբ պատրաստել, ընտանիքի բոլոր անդամները եկեղեցի ղրկելով Սարգիսը իր ընկերներով՝ Տիգրանի եւ Գարեգինի հետ անցան գործի, սակայն չարիքն իր ձեռքին գործը ընելով՝ ռումբը պայթեցաւ ու Երզնկայի Սուրմանեան թաղի Գազանճեան ընտանիքի տունը կրակներու մէջ ինկած աւերակ դարձաւ, Հայրենիքի համար սիրտերնին այրած տղաքը զոհուեցան: Ամբողջ Երզնկան ցնցուեցաւ ոչ միայն ռումբի ազդեցութիւնէն, այլ ազգանուէր տղոց անկատար մնացած գործի ոխէն:

Սարգիս Գազանճեանի հետքերով շարունակեց իր տղան Խաչիկը եւ անցաւ Զօրավար Անդրանիկի զինեալ շարքերուն, ի սէր ազգին ու հայրենիքին պետք չէ կեանք ու արիւն խնայել հիմունքով առաջնորդուած: «Կեանք չկայ առանց Հայոց Հայրենիքի, Հայն երբեք տկարութիւն չի ճանչնար, պիտի չի մոռնանք Տէր Զօրը: Ծովէծով հայոց երկիր մայր Հայաստանի համար, մահ կամ ազատութիւն»,- կ՚ըսէր Խաչիկը: Երզնկացի կամաւորին պատմութիւնն սկսաւ, երբ վասն ապագայ Հայաստանի՝ Հայ որբերը հաւաքելով Կովկաս փոխադրելու ծրագիրն իրակացնելու գործին լծուեցաւ: Այդ օրերուն Խարբերդի մէջ Հայ որբ երեխաները մէկ ոսկիով կը ծախուէին, ուստի Խաչիկն ու մի քանի տղաք կը մեկնին շրջանի մէջ գտնուող երեխաները հաւաքելու նպատակով: Տեղ տեղ պտտելով կը յաջողին խումբ մը Հայ երեխաներ հաւաքել ու հասցնել Արաբկեր, որմէ ետք մաս առ մաս անոնց կը տանին Երզնկա:

Երեխաներուն ճանապարհը բաւականին փշոտ էր, թուրք զինուորականներու հալածանքը մէկ կողմէն, տեսած չարիքներէն մնացած վախը միւս կողմէն, իսկ ծնող կորսնցնելու վիշտը մէկ այլ կողմէն, ահաւոր սարսափ ու զարհուրանք կար անոնց փոքրիկ սրտերուն մէջ:

Սեբաստեացի ընկեր՝ քաջն Մուրատ Խրմեանի հրամանով, Երզնկայէն սայլերով ծնողազուրկ երեխաներու կարաւանն իր ճանապարհը սկսաւ դէպի Կովկաս: Անոնք երամ-երամ կը յանձնուէին ղեկավարութեան, որոնցմէ մէկն էր բանաստեղծ ազգասիրութեան հեղինակութիւն Յովհաննէս Թումանեանը: Ան այնքան յոգատար էր, որ որբերուն համար պարտաճանաչ խիզախ հերոս հայր դարձած էր ու անոր յիշատակն անմահ մնաց երեխաներու յիշողութեան մէջ:

Խաչիկը տենչով կը յիշէր զարհուրելի կացութեան ներքոյ երեխաներու անվտանգ փոխադրման առաքելութիւնը, իւրաքանչիւր խումբի տեղափոխումը մարտահրաւէր մըն էր, բայց կամաւորի կամքի առաջ ի՞նչ կարելի էր կանգնի:

Ամենակարող Աստուծոյ կամքով եւ օրհնութեամբ՝ առաքելութիւնը պատշաճ կատարուեցաւ, երեխաներն արդէն ապահով ձեռքերու մէջ էին:

1917 թուականն էր, Երեւանէն եկած ֆիտայի ձիաւորներու խումբը հասաւ, խումբի ղեկավար ընկեր Զատիկը փոխանցեց, որ Ռուսիոյ մէջ մեծ յեղափոխութիւն սկսած էր, պոլշեւիկեան եղբայրասպանութիւնն արիւնահեղութեան մէջ թաթախած է Մոսկվան, ռուսական զօրքերը լքած են Կովկասեան ռազմաճակատը, եւ Հայաստանը յայտնուած է թուրքական զօրքերու ներխուժման վտանգի առջեւ:

Ուստի տղաքը լծուեցան գործի, բայց եւ այնպէս անոնք հաճախ կ՚այցելէին երեխաներուն տունը դարձած Երզնկայի Հայ Առաքելական Հայրապետ Սուրբ Լուսաւորիչի վանքը՝ թէ ժողովներ գումարելու եւ թէ երեխաներու կարիքները հոգալու:

Մերթընդմերթ երեխաներուն հանդիպելով կը յաղեցնէին անոնց ընտանիքի կարօտի ծարաւը, որբ, բայց ոչ անտէր մնացած փոքրիկներուն համար ֆիտայիներու խմբակէն իւրաքանչիւր հայդուկ հարազատ մըն էր, որուն փաթաթուիլ ու ճակատի անկեղծ համբոյր մը ստանալը անսահման երջանկութիւն էր:

Բայց ինչ երջանկութիւն, երբ գիշատիչ թշնամին իր մագիլները սրած հարուածելու կը պատրաստուէր:

Երէք օրուայ ընթացքին Խաչիկն ու քաջ ընկերները հասան Երեւան, միացան այնտեղ հաւաքուած ռուսական բանակի մէջ ծառայած շարք մը հայ սպայներուն ու զինուորներուն, անոնց հրամանատարը դարձաւ Հասան Փաշաեանը, որուն Երզնկայի մէջ բազմիցս հանդիպած էին քաջ Մուրատի քով: Այստեղ, ղեկավարութեամբ զօրավար Մովսէս Սիլիկեանի, զօրավար Թովմաս Նազարբեկեանի եւ Վանի ապստամբութեան քաջ հերոսներէն՝ ղեկավար Արամ Մանուկեանին, տեղի ունեցաւ ընդհանուր զօրակոչ: Երեւանի ժողովրդական բանակին միացաւ իւրաքանչիւր զէնք ու զրահ շալկելու կարողութիւն ունեցող տղամարդ: Զոկատներն ուղղուեցան Սարդարապատ:

Կտրիճներն արդէն դիրքերն առած պատրաստ էին Օսմանական փատիշահի գազան զօրքերուն հետ դէմ առ դէմ պատերազմելու:

(Շարունակելի)

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԼՈՒՎՐԸ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիան մշակութային ասպարեզում գերիշխող դիրք ունեցող եվրոպական երկրներից է, որտեղ անձի ներդաշնակ ձևավորման գործում կարևորվում է արվեստը: Ֆրանսիայում է գտնվում աշխարհի խոշորագույն գեղարվեստական թանգարաններից մեկը՝ Լուվրը: Շենքը ճարտարապետական հուշարձան է՝ կառուցված Փարիզում, Սենա գետի աջ ափին: Այն հիմնադրվել է Ֆիլիպ II Օգոստոս արքայի օրոք 1190 թվականին:

«Լուվր» բառի նշանակությունն առ այսօր հստակեցված չէ: Մի կողմից նշվում է, որ այն ծագել է «lupara» բառից, որը եղել է որսորդական տնակի անվանում, ուր պահվում էին որսորդական շներ, մյուս կողմից՝ այն առաջ է եկել հին ֆրանսիական «loewer» բառից, որը նշանակում է «ամրոց»:

Որպես թանգարան՝ Լուվրն իր դռները հանրության առջև բացել է 1793թ. օգոստոսի 10-ին: Այդ օրը հանրությունն առաջին անգամ դիտեց Մեծ պատկերասրահում ցուցադրված ընդամենը հինգ հարյուր երեսունյոթ նկար: Թանգարանում այժմ ցուցադրված է չորս հարյուր հազար ցուցանմուշ, որը միայն մի մասն է կազմում ամբողջ հավաքածուի:

Թանգարանի շենքը կառուցվել է հարյուրամյակների ընթացքում տարբեր ճարտարապետների, քանդակագործների, գեղանկարիչների, բեմանկարիչների կողմից՝ կրելով տարբեր ժամանակաշրջանների «շունչը»: Ուստի, շենքն ինքնին արվեստի ստեղծագործություն է:

Լուվրում հավաքագրված են մարդկության կողմից ստեղծված արվեստի գլուխգործոցներ: Թանգարանի հավաքածուն ծանոթացնում է տարբեր երկրների մշակույթին՝ մ.թ.ա. 6-րդ դարից մինչև 19-րդ դարը: Ժամանակի ընթացքում թանգարանի հավաքածուն հարստացվել է նվիրատվությունների, բարեգործությունների, թագավորական պալատներից, եկեղեցուց, այլ թանգարաններից արվեստի տարբեր գործերի տեղափոխման հաշվին: Թանգարանի հավաքածուի հարստացմանը նպաստել է նաև Նապոլեոն Բոնապարտը (հինգ հազար նմուշով), երբ նվաճված երկրներից Փարիզ տեղափոխվեցին գեղանկարչության և քանդակագործության գլուխգործոցներ: Այս ժամանակաշրջանում թանգարանը կրում էր Նապոլեոնի անունը, իսկ 1848թ. հեղափոխությունից հետո այն կոչվեց Ազգային պալատ:

Լուվրի հավաքածուի հետզհետե հարստացումը հանգեցրեց առանձին սրահների ստեղծմանը. հին արևելյան, հին եգիպտական, հին հունական և հռոմեական, քանդակագործության, գեղանկարչության, դեկորատիվ կիրառական արվեստի սրահներ:

Լուվրում ցուցադրված են եվրոպական դպրոցների նկարիչների բազմաթիվ գլուխգործոցներ, որոնք պատկանում են հայտնի գեղանկարիչներ Ռեմբրանդտի, Պիտեր Պաուլ Ռուբենսի, Ալբրեխտ Դյուրերի, Դիեգո Վելասկեսի, Ֆրանսիսկո Գոյայի, Էժեն Դելակրուայի և այլոց վրձնին:

Գեղանկարչության սրահում իր ուրույն տեղն է զբաղեցնում աշխարհահռչակ համբավ վայելող Լեոնարդո դա Վինչիի գլուխգործոցը՝ «Մոնա Լիզա» կամ «Ջոկոնդա» նկարը: «Մոնա Լիզա»-ն խորհրդավոր է իր ժպիտով: Նման խորհրդավորությունը ոգեշնչման աղբյուր է հանդիսացել երաժիշտների համար՝ ստեղծելու գեղեցիկ կատարումներ՝ նվիրված Մոնա Լիզային:

1989թ. Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի պատվերով Լուվրի պալատի նապոլեոնյան հրապարակի մեջտեղում կառուցվում է 21 մետր բարձրությամբ ապակեպատ բուրգը (նոր մուտք դեպի թանգարան)՝ չորս բուրգերից մեկը, որի մուտքի մոտ է ամենից շատ հերթ գոյանում: Օրական Լուվր է այցելում տասնհինգ հազար մարդ, իսկ 2014թ. այցելուների թիվը 9.3 միլիոն էր:

Լուվրում պահված բազմաքանակ թանկարժեք գանձերը, գլուխգործոցները՝ ստեղծված տարբեր ժամանակաշրջաններում, շարունակում են «ապրել»՝ մարդկանց մեջ ձևավորելով գեղագիտական ճաշակ և հավատք՝ հումանիստական գաղափարների նկատմամբ:

Աշոտ Բաբախանյան
Մարիաննա Ամիրաղյան

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԻՑ

«Նարեկացի» արվեստի միությունում սեպտեմբերի 24-ին բացվեց «Հայրենիքը սկսվում է սահմանից» խորագրով լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված Հայաստանի անկախության 27-րդ տարեդարձին: Ցուցահանդեսում ներկայացված էին 4 աղջիկների աշխատանքներ: Նրանցից մեկը մեր համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի գեղարվեստական լուսանկարչություն մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի ուսանողուհի Էլեն Գասպարյանն էր, ով ներկայացրել էր 15 աշխատանք: Մյուս աղջիկները ներկայացնում էին ԵՊՀ-ն:

Աղջիկները ներկայացրել էին շուրջ մեկ տարվա աշխատանքներ:Լուսանկարներում նրանք պատկերել էին առաջնագծում գտնվող զինվորների առօրյան, ներաշխարհի դրսևորումները՝ հուզմունք, ժպիտ, ամենատարբեր տրամադրություններ:

ՀՀ պաշտպանության բանակի Ազգբանակ ծրագրի շրջանակներում «Հանուն հայ զինվորի» ՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպված ցուցահանդեսը ներկաներին գեղեցիկ հույզեր պարգևեց և փաստեց, որ սահմանապահ տղաներին աջակցելը յուրաքանչյուր հայի պարտքն է:

Մանկավարժական համալսարանի հումանիտար գրականության ընթերցասրահում տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Գագիկ Ավետիսյանի «Միր Բաշիր. պատերազմ և զինադադար» գրքի շնորհանդեսը, որն ուղեկցվում էր գրաֆիկական աշխատանքների ցուցադրությամբ:

140 էջանոց գիրքը գրախոսել են քաղաքագիտության դոկտոր Լևոն Շիրինյանը, պատմական գիտությունների դոկտոր Էդվարդ Պողոսյանը և պատմական գիտությունների թեկնածու Ավագ Հարությունյանը:

Հեղինակը գրքում ներկայացրել էր արցախյան պատերազմի 1994 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ծավալված մարտերի ընթացքը և դիվանագիտական հարթակում զինադադարի արձանագրությանը միտված միջնորդների գործունեությունը:

Իրենց ելույթներում բանախոսներն ընդգծեցին, որ գիրքը ուսանողի հայրենասիրության բարձր արտահայտություն է և դրվատանքի խոսքեր հղեցին նրան:



Լ. Շիրինյանը ներկայացրեց գրքի գաղափարախոսությունը: Քաղաքագետը կարևորեց գրքի ասելիքը ռազմաքաղաքական և պատմագիտական մտածողության տեսանկյունից՝ փաստելով, որ ուսանողը կոտրել է կարծրատիպերը:

«Մենք պահանջում էինք իշխանությունից՝ թողնել պաշտպանվելու մարտավարությունը և անցնել հարձակվողական մարտավարության»,-ասաց քաղաքագետը՝ ընդգծելով, որ խաղաղության երազանքը միայն արյունով կարելի է ձեռք բերել:

«Եթե մենք չհասնենք Քուռ-Արաքսի սահմանագծին, և թալիշներն էլ ոտքի չկանգեն, խաղաղության մասին խոսք լինել չի կարող…Ամենադժվարը տարածքներ հանձնելն է…Սա ես տեսնում եմ մեր ուսանողի գրքի համատեքստում»:

Գ. Ավետիսյանի՝ Արևմտյան Հայաստանը պատկերող գրաֆիկական աշխատանքների և ուսանողի մասնագիտական բարձր պատրաստվածության մասին խոսեց Հայաստանի վաստակավոր նկարիչ Մարտիրոս Բադալյանը՝ նրան տալով խորհրդանշական նվեր՝ Մարտիրոս Սարյանից ստացած վրձինը:

«Արևմտյան Հայաստանում արված իմ նկարները հիշեցնում են, որ չպետք է մոռանալ մեր պապերի երկիրն ու պետք է վերադառնալ այնտեղ, իսկ գիրքը հուշում է վաղ թե ուշ մեր կորցրած հողերը ետ բերելու անխուսափելիության մասին»,- ասաց Գագիկը:

Գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը շնորհավորեց հեղինակին և մաղթեց, որ գիրքը շարունակություն ունենա. «Ինչպես ասում են, Փարիզում հեշտ է հայրենասեր լինել, առավել դժվար է հայրենասեր լինել Հայաստանում, որտեղ մեզնից յուրաքանչյուրը մեծ պատասխանատվություն ունի հայրենիքի հանդեպ»:

Հանդիպմանը մասնակցում էր նաև Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Արցախի հերոսամարտի լեգենդ Կոմանդոսը, ում ներկայությունն արդեն իսկ ընթերցասրահում ներկա գտնվողներին համակել էր անցած օրերի հերոսականությամբ ու հողի և հայրենիքի պաշտպանությունը ամեն ինչից վեր դասելու բարձր գիտակցությամբ ու պատասխանատվությամբ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 04.10. 2018 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ